

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼԼԻ ԷԴՈՒԱՐԻ

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ
ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ. ԻՆՏԵԳՐԱՑՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄ

Ժ. 02.07.-<<Ռումանագերմանական լեզուներ>>

մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Խոսքում՝ նրա թվացյալ պարզունակությամբ հանդերձ, նկատվում է ձևաստեղծման մեխանիզմների բազմազանություն: Խոսքի իրականությունն է, որ ստիպում է զբաղվել այնպիսի հետազոտություններով, որոնց հիմքում ընկած է մարդու գործոնը: Հեղինակ-ընթերցող փոխհարաբերության, լեզվի և մտածողության, լեզվակիրների գիտակցության մեջ լեզվական աշխարհի կադապարման, հաղորդակցական մտադրության, մտածելակերպի դրսևորման, հասցեատիրոջ կողմից ընկալման և մեկնաբանման խնդիրներին նվիրված ուսուսմասիրությունները շարունակում են մտալ առանցքային: Արդի շրջանում, երբ գնալով աճում է հետաքրքրությունը ճանաչողական հայեցակերպի շրջանակներում առաջ քաշված խնդիրների ուսուսմասիրության նկատմամբ, առավել կարևորվում է նմանատիպ աշխատանքների դերը: Այս առումով Նելլի Սարգսյանի ատենախոսությունը, որտեղ ինտեգրացված մոտեցմամբ քննվում է փոխաբերությունը ճանաչողական հայեցակերպի դիտանկյունից, լիովին համապատասխանում է արդիական միտուսներին: Սույն ատենախոսությունը ներկայացնում է փոխաբերության հնարավորինս համալիր հետազոտություն՝ լեզվական, ոճական, ճանաչողական հայեցակերպերի համադրմամբ: Նման մոտեցումը հնարավոր է դարձնում ուսուսմասիրել փոխաբերության ամբողջական գործընթացը՝ սկսած ձևավորումից և առկայացումից մինչև մեկնողական ընկալում:

Ատենախոսության տեսական առանցքը կառուցված է փոխաբերության՝ որպես բազմաշերտ երևույթի ընկալման վրա, որը դուրս է գալիս զուտ լեզվաբանական ավանդական սահմանուճսերից: Հեղինակը հաջողությամբ համադրում է փոխաբերության ուսուճասիրության փիլիսոփայական, հոգեբանական և ճանաչողական հայեցակետերը՝ դիտարկելով այն որպես մարդու մտածողության և արտաքին աշխարհի ընկալման կարևորագույն գործիք: Կարևոր տեղ է զբաղեցնում Ջ.Լակոֆի և Մ. Ջոնսոնի կողմից մշակված հասկացության փոխաբերության տեսությունը, որը հիճաավորում է մարդու հասկացության համակարգի լիակատար փոխաբերականությունը: Ատենախոսության մեջ փոխաբերությունը սահմանվում է որպես ճանաչողական մոդել, որը մասնակցում է փորճառությամբ ձեռք բերված գիտելիքի կառուցմանն ու դասակարգմանը:

Հատուկ ուշադրություն է դարճվում հերմենևտիկական մեթոդին, որը հնարավորություն է տալիս վերհանել հեղինակի մտադրությունը և տեքստի թաքնված իմաստները: Աշխատանքում ելակետային է այն դրույթը, որ փոխաբերության թարգմանությունը ոչ թե պարզ բառային փոխարինում է, այլ հեղինակի ճանաչողական մեխանիզմների և պատկերավոր մտածելակերպի վերարտադրում թիրախ լեզվում: Այլ կերպ ասած, փոխաբերության թարգմանությունը դիտարկվում է որպես միջմշակության ճանաչողական բանակցություն, ոչ թե միայն լեզվական փոխարինում:

Ատենախոսին հաջողվել է լեզվի ոճական և ճանաչողական քննության ճանապարհով ներթափանցել հեղինակի մտածողության և հույզերի ներաշխարհը, ծանոթանալ նրա աշխարհայացքին, հաղորդակցական մտադրությանը, բացահայտել վերաբերմունքը առկա իրավիճակի նկատմամբ: Ատենախոսը նպատակ ունի բացահայտել, վերլուծել, կարևորել հեղինակի մտադրության հայեցակերպի դերը, ցույց տալ հեղինակի մտադրության առկայությունը, քննել լայն առումով հեղինակ-թարգմանիչ հարաբերակցությունը՝ ելնելով թարգմանության յուրահատկություններից: Աշխատանքում ելակետային է այն դրույթը, որ խոսքը

բնութագրվում է որպես նպատակաուղղված հաղորդակցական գործընթաց, որը հեղինակին հնարավորություն է տալիս ներագդել ընթերցողի վրա՝ ընդգծելով իր անհատական ոճը, իսկ թարգմանչին՝ ընկալել, վերլուծել և ապահովել «հեղինակի միտում-միտման վերարտադրում» կապը:

Ատենախոսը առաջարկում է ինտեգրացված մեթոդաբանություն, որը համադրում է հերմենևտիկական-տեքստաբանական և ճանաչողական-լեզվաոճաբանական վերլուծության մեթոդները, ինչն արտացոլում է աշխատության *արդիականությունը*: Ատենախոսության մեջ նորովի է մեկնաբանում գեղարվեստական տեքստի լիակատար թարգմանության խնդիրը:

Աշխատության *գիտական նորույթը* պայմանավորված է խոսքին յուրահատուկ հուզականություն հաղորդող փոխաբերությունների համակողմանի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ձևակերպված այն ելակետային դրույթով, համաձայն որի՝ հեղինակի հաղորդակցական նպատակի իրագործումն ու դրա համարժեք վերարտադրությունը թարգմանության մեջ ապահովվում են ճանաչողական, իմաստաբանական և ոճագիտական մեթոդների համադրական կիրառությամբ:

Հարկ է նշել, որ հետազոտության *տեսական արժեքը* դրսևորվում է միջգիտակարգային համապարփակ մոտեցմամբ, որի արդյունքում փոխաբերության թարգմանության հիմնախնդրի ուսումնասիրությունն ընդլայնվում է թարգմանաբանության սահմաններից՝ ինտեգրելով նաև հոգեբանության և ճանաչողական գիտության ոլորտները: Այն ներառում է նաև լեզվաբանական, ճանաչողական և տեքստաբանական արդի հիմնահարցեր՝ ստեղծելով փոխաբերության հետազոտության համալիր գիտական շրջանակ:

Աշխատանքն, անշուշտ, ունի *գործնական կիրառելիության* լայն շրջանակ: Մշակված ինտեգրացված մեթոդը կարող է կիրառվել ոչ միայն բանասիրական վերլուծություններում, այլև արհեստական բանականությամբ գործող թարգմանական

համակարգերի կատարելագործման մեջ: Ատենախոսության մեջ ձևակերպված է քայլերի հաջորդականության ռազմավարություն՝ թիրախ-տեքստում համարժեք փոխաբերության հայտնաբերման համար, ինչը մեծապես կհեշտացնի թարգմանիչների աշխատանքը:

Ներածական մասում հեղինակը հիմնավորում է թեմայի ընտրությունը, ներկայացնում է հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթն ու արդիականությունը, ինչպես նաև աշխատանքի հիմնական խնդիրները:

Առաջին գլխում ատենախոսը ներկայացնում և վերլուծում է փոխաբերության ճանաչողական և իմաստաբանական հիմքերը՝ անդրադառնալով դրա էությանը, վերհանման մեթոդներին և ճանաչողական մեխանիզմներին: Ուշադրության կենտրոնում են նաև փոխաբերության գործաբանական նշանակությունն ու դրա դերը իրականության ընկալման գործընթացում:

Երկրորդ գլխում ատենախոսը հիմնավորում է գրական դիսկուրսի հասկացությանին-փոխաբերական բաղադրիչի կարևորությունը թարգմանության տեսության մեջ: Գլխում ներկայացվում են գեղարվեստական տեքստի հերմենևտիկական և ճանաչողական մեկնաբանության առանձնահատկությունները, ինչպես նաև առաջարկվում է փոխաբերության թարգմանության ինտեգրացված մեթոդ՝ հիմնված իմաստային, գործառությանին և գեղագիտական համարժեքության սկզբունքների վրա:

Գործնական տեսանկյունից առավել հետաքրքրական է ատենախոսության *երրորդ գլուխը*: Հետազոտության արդյունքները հիմնավորված են Ջեկ Լոնդոնի երեք նշանավոր վեպերից («Մարտին Իդեն», «Չսպաշապիկ», «Սպիտակ ժանիք») քաղված 450 փոխաբերական միավորների և դրանց թարգմանությունների զուգադիր քննությամբ: Սա ապահովում է աշխատանքի արդյունքների հավաստիությունն ու գործնական արժեքը:

Ուզում եմ նշել, որ ներկայացված օրինակների մանրամասն քննությունը առավել մեծ ակնհայտությամբ է ի ցույց դնում ատենախոսության հեղինակի լեզվական զգացողությունը ու դատողությունների տրամաբանական ճիշտ ընթացքը:

Եզրակացության մեջ հեղինակը ամփոփում է հետազոտության արդյունքները՝ ընդգծելով դրանց համապատասխանությունը սահմանված նպատակներին:

Ատենախոսությունը համապատասխանում է իր ժանրի բոլոր չափանիշներին, հղումներ են արվում համապատասխան քանակի և որակի նոր և դասական աշխատություններից, որոնք արտացոլված են գրականության ցանկում, իսկ փաստական նյութի մանրամասն վերլուծությունը հնարավորություն է տվել ատենախոսին անել ինքնուրույն եզրահանգումներ հետազոտությունների արդյունքների վերաբերյալ:

Այնուամենայնիվ կցանկանայի անդրադառնալ որոշ, ոչ սկզբունքային բնույթ կրող դիտարկումների և առաջարկների:

1. Հետաքրքիր կլիներ պարզել, թե որքանո՞վ է հաշվի առնված թարգմանչի անհատական ճանաչողական ոճը և ինչպես են ընդհանրապես հարաբերակցվում հեղինակի և թարգմանչի անհատական ոճերը:

2. Հետագա ուսումնասիրության համար կառաջարկեի անդրադառնալ նաև արհեստական բանականության կողմից փոխաբերությունների թարգմանության առանձնահատկությունների քննությանը և համեմատել թարգմանչի և արհեստական բանականության կողմից թարգմանված օրինակները :


3. Հետաքրքիր է իմանալ, թե արդյոք նկատվել են «ճանաչողության կորստի» դեպքեր, երբ թարգմանության ընթացքում կորչում է իմաստային, մշակութային կամ հաղորդակցական շերտ:

Նշված մի քանի դիտարկումները արտացոլում են հետաքրքրությունս թեմայի և կատարված աշխատանքի հանդեպ և պետք է ընկալվեն ավելի շուտ որպես առաջարկ:

Ներկայացված աշխատանքը, անշուշտ, արդիական և գիտականորեն հիմնավորված հետազոտություն է, որն էական նշանակություն ունի ինչպես տեսական թարգմանաբանության, այնպես էլ գործնական թարգմանության ոլորտների համար:

Ուսումնասիրված ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից բանասիրական գիտությունների թեկնածուի հայցմանն առաջադրվող բարձր պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակը՝ Նելլի Սարգսյանը, միանգամայն արժանի է հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
բանասիրության գիտությունների թեկնածու, դոցենտ՝


Գ. Ռ. Հարությունյան

Հաստատում եմ Գ. Հարությունյանի նորագրությունը

ԵՊՀ գիտական քարտուղար



Մ. Վ. Հովհաննիսյան

12. 05. 2026